

ԺԱ.

ԱՌԱՔԵԼ Վ. ՅՈՒՌՈՒԹՅԻ, ԲՈՐԻԿ

ԱՐՔԵՊ. ԵՐՆՋԱԿԱՅ ԳԼԵԱՌԻՆ (1613—1680)

Սոյն Արքեպիսկոպոսի մասին մանրամասն տեղեկութիւններ կը պակսին: Ստ. Ռոշքա իր Ժամանակագրութեան մէջ կը գրէ. «1682. Առաքել Վ. Եպս.ն Երնջակայ գաւառին, այր սրբակրօն, անինչ, եւ հռչակաւոր քարոզատու, որ բոկոտամբ շրջելով ի քարոզութեան, ըուպիկ կոչեցաւ, եւ վասն անընչութեանն, զի զոր ինչ տային նմա պարգեւ, որպէս սովոր են առնել Հայք, աղքատաց բաշխէր, անարժամ վարդապետ անուանեցաւ: Սա ի Յակոբայ Կաթողիկոսէն երկիցս առաքեցաւ ի Հոսմ վասն հաստատելոյ զմիաբանութիւնն, ուր եւ վճարէ զկեանս իւր, եւ իբր սուրբ թաղի յեկեղեցւոջ Հայոց Սուրբ Մարիամու Եգիպտացւոյն, որ եւ այժմ պատուի յուխտաւորաց:»

Նոյնպէս Վարդան Արքեպ. Յունանեան († Յունիս, 1715) իր «Թուղթ քաջալերական», գրութեան մէջ կը յիշէ. «Առաքեալ Վ. Բուպիկ անուանեցեալ, Եպիսկոպոս Երնջակու գաւառին, ոչ միայն գրեաց, այլ եւ բազմիցս դիմեաց ի